

Հաստատված է նոր խմբագրությամբ
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության
24.10.2025թ.-ի թիվ 68/1-Լ որոշմամբ
Ուժի մեջ է՝ 27.10.2025թ.

«Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության խթանում» ծրագրի հերթական 7-րդ փուլ		
	ԳՀՀ ՎԷ*	ԳՀՀ ԷԱ
Արժույթ	ՀՀ դրամ ¹	
Մարման ժամկետ	Մինչև 120 ամիս	Մինչև 60 ամիս
Արտոնյալ ժամկետ	Մինչև 6 ամիս ²	Մինչև 6 ամիս
Նվազագույն / առավելագույն գումար ³	ՖՎ**-150 - մինչև 80 մլն ՀՀ դրամ ՖՎ-500 - մինչև 200 մլն ՀՀ դրամ ՖՎ-1050 - չի սահմանվում ՖՎ-Լ*** - մինչև ծրագրային միջոցների 30% BESS**** - չի սահմանվում	1 մլն – 500 մլն ՀՀ դրամ ⁴
Շահառուներ ⁵	ՖՎ-150, BESS - Իրավաբանական, ֆիզիկական անձինք , անհատ ձեռնարկատերեր ՖՎ 500, ՖՎ 1,050, ՖՎ-Լ - Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր	Իրավաբանական, ֆիզիկական անձինք , անհատ ձեռնարկատերեր
ՎԷ - Առավելագույն փաստացի տոկոսադրույք	ՖՎ-150 - ՀՀ դրամ՝ 10% ՖՎ-500 և ՖՎ-1050 ՀՀ դրամ՝ 9.5% ՖՎ-Լ - ՀՀ դրամ՝ 9.5% և ԵՎԲՈ՝ 5.5%	
ԷԱ - Առավելագույն փաստացի տոկոսադրույք	10.75%	

*ՎԷ ծրագրերի համար ներգրավված միջոցներից առնվազն 10 տոկոսը պետք է ուղղվի Կանանց ձեռներեցության/ֆիզիկական անձանց ծրագրերին(390.000Եվրո)

**ՖՎ- Ֆոտո վոլտային

***ՖՎ-Լ- Ֆոտո վոլտային լիցքավորում

**** "BEES" - Battery Energy Storage System (էներգիայի պահեստավորման համակարգ), որը օգտագործվում է էներգիայի պահեստավորման նպատակով:

¹ ՖՎ-Լ տեսակի (արդյունաբերական) արևային կայանների դեպքում թույլատրվում է ֆինանսավորում նաև ԱՄՆ դոլարով և Եվրոյով, որի առավելագույն տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է լինի մինչև 5.5 տոկոս:

² ՖՎ-Լ տեսակի (արդյունաբերական) արևային կայանների դեպքում մինչև 12 ամիս

³ ՖՎ – 150 և BESS ներդրումները ֆինանսավորվում են նախագծի մինչև 100 տոկոսի չափով, իսկ ՖՎ-500, ՖՎ-1050 և ՖՎ-Լ կայանները ֆինանսավորվում են նախագծային արժեքի մինչև 80 տոկոսի չափով:

⁴ Բացառիկ դեպքեր՝ ՀՀ տնտեսության վրա էական դրական ազդեցություն ունեցող ներդրումներ, կարող է հասնել մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ

⁵ Իրավաբանական անձ շահառուները պետք է համապատասխանեն միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների սահմանմանը՝ համաձայն IFC-ի սահմանման.

<https://www.ifc.org/en/what-we-do/sector-expertise/financial-institutions/definitions-of-targeted-sectors> : Ընկերությունների 51 տոկոս և ավելի սեփականությունը պետք է լինի ոչ պետական

Նպատակ	Ներդրումներ, որոնք կապված են էներգախնայող տեխնոլոգիաների ձեռք բերման հետ և, որոնց առաջնային նպատակը էներգիայի սպառման նվազեցումն է, կամ էներգախնայողությունը և/կամ ածխաթթու գազի արտանետման կրճատումն է առնվազն 20%-ով:	- Կապիտալ ներդրումներ, որոնք համապատասխանում են էներգախնայողության միջոցառում-ներին: - ԷԽ-ին համապատասխանող ապրանքների ձեռքբերում՝ որպես շրջանառու միջոցներ - Շրջանառու միջոցներ, որոնք իրենք չեն համապատասխանում ԷԽ-ին, բայց ենթավարկի $\geq 70\%$-ը ուղղվում է ԷԽ համապատասխան հիմնական միջոցներին, իսկ ձեռք բերված շրջանառու միջոցները ուղղակի կապված են տվյալ ԷԱ/ՎԷ ներդրման հետ
Վարկի տրամադրման միջնորդավճար	0.5%* (պարտադիր է հաշվի առնել տարեկան փաստացի տոկոսադրույքների սահմանափակումները)	
Այլ պայմաններ	Բոլոր ծրագրերը պետք է համապատասխանեն Ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական պարտավորությունների պլանի պահանջներին	
		Ըստ ֆինանսավորման չափի և ներդրման տեսակի հնարավոր է պահանջվի էներգառուդիտ
	Չեն ֆինանսավորվում ա) Այլ վարկային պարտավորությունների մարման նպատակով տրամադրված վարկերը, բ) այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից տրված վարկերի վերաֆինանսավորման համար, և/կամ այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից միջնորդավորված վարկերի համար : գ) սպառողական նպատակով (բացառությամբ ՖՎ-150 նախագծերի) և բնակության համար նախատեսված անշարժ գույքի ձեռքբերման կամ վերանորոգման վարկերը, դ) այն վարկերը, որոնք նախատեսված են կառավարության կողմից պետական կարիքների համար օտարման ենթակա հողերի ձեռքբերման համար, ե) ոչ մասնավոր Շահառուներին տրամադրված վարկերը (<< ռեզիդենտ մասնավոր սեփականատերերի 50%-ից պակաս մասնաբաժին ունեցող Շահառուներ), զ) արժութային և արժեթղթերի սպեկուլյացիայի հետ կապված վարկերը, է) խաղատների գործունեության հետ կապված վարկեր, ը) վերականգնվող վարկային գծերը, թ) լոմբարդային վարկերը կամ բոլոր այն վարկերը, որոնք տրամադրված են միայն գրավի հիման վրա (ենթավարկերը պետք է տրամադրվեն առնվազն նախորդող 6 ամիսների քիզնես գործունեության (գյուղատնտեսության և/կամ այլ ոլորտում) ֆինանսական վերլուծության հիման վրա) բացառությամբ ֆիզիկական անձանց համար տրամադրվող ՎԷԷԿ ենթավարկերի, ժ) վարկեր այնպիսի տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար, որոնց օգտագործումը շահառուի տնտեսական գործունեության հետ ուղղակիորեն կապված չէ (օրինակ՝ ներկայացուցչական մեքենաներ): ի) վարկեր այն գործունեությունների համար, որոնք ընդգրկված են IFC-ի բացառման ցանկում (հասանելի է հավելված 3-ում կամ հետևյալ կայքում՝ https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/company-resources/ifcexclusionlist (ցուցակի ոչ պաշտոնական թարգմանությունը տրամադրված է սույն պայմանագրի հավելված 3-ում)): յ) վարկեր, որոնք առանձնացված տրամադրվում են հարկեր, այլ պետական վճարներ և մաքսային տուրքեր ֆինանսավորելու նպատակով:	

	խ) սկսնակ բիզնեսին տրամադրվող վարկերը, որոնց հաշվին ֆինանսավորվող նախագծերի ընդհանուր արժեքը գերազանցում է 5 մլն ՀՀ դրամը (ֆինանսավորվող նախագծի ընդհանուր արժեքը 5 մլն ՀՀ դրամը չգերազանցող սկսնակ բիզնեսին Ենթավարկերը կարող են տրամադրվել ապագա կանխիկ հոսքերի վերլուծության և/կամ այլ պարբերական եկամուտների (օրինակ՝ ամսական աշխատավարձ) հիման վրա):
--	--